

7112

Բարեկամություն

Կապույտ գիր . . .

329

F - 34

Կ. Պոլս

1920

EB 2001

EB 2001

9752

ԲԱՐԵՓՈՒՈՒԱԾ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԹՈՒՐՔԻՈՅ

Ընկերվարական Կուսակցության



Կ. ՊՈԼԻՍ

Տպ. ք. Փարազեան Շիր. Պատպի հաս. սր

1920

329
Բ-34

նարկ պիտի կարենան ընել: Երեսփոխանական ժողովին մէջ միացող խմբակցութիւնը բանւորներուն քաղաքական իրաւունքները և ազատութիւնը և գործաւորներուն գոյութիւնը բարւոք վիճակի մը պիտի հասցնէ և միևնոյն ժամանակ իւր ջանքերը պիտի յատկացնէ գործազրուեան դնելու համար այն բարեփոխումները որ պիտի գերազնեան դասակարգային պայքարը: Իւրաքանչիւր երեսփոխան ենթակայ է կուսակցութեան որոշումին՝ թէ երկրին մէջ իր արարքներուն թէ բռնաբախանտի գործողութեան և թէ վերջապէս Ընկերվարութեան վերաբերող իր ամեն կերպ շարժմանց մասին:

Յօդուած 1.— Կուսակցութեան անունը «Թուրքիոյ Ընկերվարական Կուսակցութիւն» է: Հիմնադիրը Ընկեր Հիւսէյին Հիլմի կուսակցութեան ցլեանս տեւական նախագահն է:

Յօդուած 2.— Կուսակցութեան հիմնադիրները ուղղակի կերպով կըստանձնեն կուսակցութեան քաղաքականութեան և ընդհանուր գործառնութեանց կարգադրութիւնը և վարչութիւնը և անոնցմէ ծագած պատասխանատուութիւնը, հինգ տարի շրջանով: Այս հիման վրայ մասնաճիւղի կազմութեան Գլուխին 14րդ յօդուածը, մասնաճիւղի պաշտօններուն Գլուխին 23 րորդ յօդուածը և կեդրոնական վարչութեան Գլուխին 33 րորդ յօդուածը նոյնպէս հինգ տարի շրջանով ընդունուած են և նոյն յօդուածներուն այս տրամադրութիւնը վերոյիշեալ ժամանակամիջոցին մէջ գումարուելիք Ընդհ. ժողովին մէջ (Պատգամաւորական ժողով) ին մէջ (Գօնկիւն) ոչ պիտի քննուի և ոչ ալ պիտի բարեփոխուի:



69833 - Ա-7.

344-82

Յօդուած 3.— Ասոնցմէ դատ տրամադրութեանց փոփոխումը կրնայ ըլլալ միմիայն Ընդհանուր ժողովի միջոցաւ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆԻ

Յօդուած 4.— Կուսակցութեան անդամակցող ընկերները պէտք է գրաւոր կերպով խոստանան և պահովցնեն թէ կուսակցութեան ծրագիրը և ներքին կանոնադիրը ընդունած են և անոնց տրամադրութեանց բացարձակապէս համաձայն պիտի վարուին. պէտք է նաև ուրիշ ո և է կուսակցութեան կամ ընկերակցութեան հետ իրենց յարաբերութիւնը խզեն:

Յօդուած 5.— Ասկէ դատ, պէտք է ունենալ վկայագիր մը կուսակցութեան անդամներէն միոյն կողմանէ յայտարարող թէ շահագիտութեամբ, խարեբայութեամբ, զեղծարարութեամբ, գողութեամբ, կաշառքով, պատերազմի դրողմով, սճիրով և ուրիշ ո և է թերութեամբ և յանցանքով ամբաստանեալ չեն և բարի վարքով և առաքինի կեանքով օժտուած են: Պէտք է նոյնպէս 3—5 չափի վրայ իւր կենդանագիրեն երեք օրինակ յանձնեն:

Յօդուած 6.— Կուսակցութեան ամէն անդամներուն ալ վաւերագիրը միմիայն կեդրոնական վարչութեան կողմէ կը տրուի. կեդրոնական վարչութեան պաշտօնական կնիքը և ընդհանուր նախագահին ստորագրութիւնը չը կրող վաւերագիրները կեղծ են:

Յօդուած 7.— Ամէն անգամ, իւր անձնական փափաքին և գրամական կարողութեանը համեմատ մէկ

ուսկիէն պահաս չըլլալու պայմանաւ, կուսակցութեան մէջ ընդունուելու տաեն մուտքի գին մը, կը վճարէ. նոյնպէս 20 դրուչէն վար չըլլալու պայմանով ամսավճար մը տալ պէտք է խոստանայ անպատճառ: Ամսական վճարումները երեք ամիս շարունակ չը վճարողները կուսակցութենէն կը վտարուին:

Յօդուած 8.— Կուսակցութեան սկզբունքին, ծրագրին և ներքին կանոնադրին հակառակ վարուողները և եկամուտին զեղծումով վնասողները անմիջապէս կուսակցութենէն կ'արտաքսուին և այգպիսիներուն մասին օրինական հետապնդում կը կատարուի:

Յօդուած 9.— Կեդրոնական խորհուրդներու և մասնաճիւղերու մէջ խաղաժողութեամբ կամ բարոյականի հակառակ գործքերով պարապիլ բացարձակապէս արգիլուած է, սենեկապանը, սրճեփը և այլն պէտք է անպայման կուսակցութեան ընկերներէն ըլլան:

Յօդուած 10.— Ընկերներուն գոյութիւնը կուսակցութեան համար նկատողութեան արժանի և թանկագին է, այսպէս ամէն ընկեր եթէ փորձանքի մը կամ զրկանքի մը ենթակայ ըլլայ, իրեն վերաբերող մասնաճիւղին օգնութիւնը խնդրելու իրաւունք ունի, փոխադարձաբար մասնաճիւղերն ու կեդրոնական խորհուրդները այսպիսի պարագաներու մէջ ընկերներուն օգնութեան համեմուտ և կամ անոնց գործերուն գիւրութիւն տալու պարտական են:

Յօդուած 11.— Իւրաքանչիւր ընկեր, կուսակցութեան կողմէն իրեն յանձնուած պաշտօնը կէտ առ կէտ կատարելու պարտական է: Իրենց ասպարէզին

մէջ կուսակցութեան կարեւոր ծառայութիւններ, մատուցանող ընկերներուն մահուան պարագային, կուսակցութիւնը անոնց ընտանիքին իր նիւթական և բարբոյական օգնութիւնը և պաշտպանութիւնը երբէք չպիտի զլանայ:

Յօդուած 12.— Մայիս 1ի օրը բանուորական միութիւններու և հողագործներու տօնական մէկ օրը ըլլալուն առթիւ Միութեան բոլոր անդամները տօնին պատշաճ իրենց միջավայրերու մէջ ցոյցեր պիտի կազմակերպեն:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Յօդուած 13.— Մասնաճիւղ չեղած տեղերը, անուազն հինգ հոգիէ բաղկացեալ խումբ մը, կեդրոնին արտօնութեամբ և հաւանութեամբ նոյն տեղւոյն վրայ մասնաճիւղ մը կրնայ կազմակերպել և բանալ: Իւրաքանչիւր մասնաճիւղ իր պաշտօնական կնիքը անպատճառ կեդրոնական վարչութենէն կ'ստանայ:

Յօդուած 14.— Մասնաճիւղի գիւանը կը կազմեն երկու անդամ և կեդրոնական վարչութենէն ընտրուած և կամ անուանուած մէկ նախագահ, մէկ քարտուղար և մէկ զանձագիտ:

Յօդուած 15.— Իւրաքանչիւր մասնաճիւղի և կեդրոնական խորհուրդի մէջ կը գտնուի մէկ գործօն մարմին մը որուն անդամոց պաշտօնը որոշուած և բացատրուած է գործօն Մարմիններու յատուկ կանոնագրին մէջ:

Յօդուած 16.— Մասնաճիւղի գանձապետներէն պէտք է առնել հաստատուն երաշխաւորադիր դոր փութով պէտք է դրկել Կեդրոնական Վարչութեան :

Յօդուած 17.— Եթէ մասնաճիւղին և կեդրոնական խորհուրդին դրամը 50 օսկիէն աւելի է, այն աւելի դրամը հետեւեալ պայմաններով դրամատան կը յանձնուի :

Ա.— Մասնաճիւղը և կամ Կեդր. Խորհուրդը, երբ կը գտնուի Կեդր. Վարչութեան մօտակայ տեղ մը, յիսուն օսկիէն վեր եղող գումարը դրամատան կը յանձնուի գրով մը որ պէտք է կրէ Կեդրոնական Վարչութեան պաշտօնական կնիքը և ընդհանուր նախագահին ընկեր Հիւսէյին Հիւմի ստորագրութիւնը, նոյն Մասնաճիւղին պաշտօնական կնիքը և գանձապետին ստորագրութիւնը, և ի պահանջել հարկին յիշեալ գումարը նոյն կնիքներով և ստորագրութիւններով կը ստացուի : Մասնաճիւղի գանձապետներէն միոյն օ և է կերպով հեռացման պարագային, սոյն գլուխին երկրորդ օր է 14րդ յօդուածին համեմատ, ինչպէս որ նախագահ, քարտուղար և գանձապետներուն անուանումը Կեդր. Վարչութեան իրաւասութիւնը և պաշտօնն է, նոյնպէս ալ նոր գանձապետին ստորագրութիւնը Կեդրոնական Վարչութեան կողմէ կը ներկայացուի դրամատան, որն որ պէտք է ճանչնայ և ընդունի միայն նոր ստորագրութիւնը :

Բ.— Մասնաճիւղը եթէ կը գտնուի Կեդրոնական Վարչութենէն հեռու տեղ մը, գումարի մը դրամատան յանձնումը կը կատարուի նոյն մասնաճիւղին պաշտօ-

նական կնիքով միատեղ նախագահին, քարտուղարին և գանձապետին ստորագրութեամբ և նոյն կնիքով և ստորագրութիւններով Կեդրոնական Վարչութեան հաւանութիւնը տանելէ յետոյ, դրամատանէն կ'ըստացուի : Մասնաճիւղին նախագահը, քարտուղարը և գանձապետը փոխուելուն կամ անոնց հրաժարմանը պարագային, նոյնպէս սոյն գլուխին 2րորդ օր և է 14րդ յօդուածին համեմատ նոր ընտրուած նախագահին, քարտուղարին և գանձապետին ստորագրութիւնը Կեդրոնական Վարչութեան կողմէ կը ներկայացուի դրամատան, որն որ պէտք է ճանչնայ և ընդունի միայն նոր ստորագրութիւնները :

Յօդուած 18.— Գանձապետը և քարտուղարը, Դիւանին որոշումը առանց ստանալու ոչ մէկ դրամ ծախսելու, ոչ մէկ գրութիւն տեղ մը դրկելու և կամ թղթակցութիւն ընելու արտօնութիւն չունին :

ՄԱՍՆԱՃԻՂԻՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ

Յօդուած 19.— Մասնաճիւղերը իրենց անդամաց մտաւոր զարգացման վիճակին բարւոքման և իրաւունքներու պաշտպանման պիտի աշխատին և առեն առեն ժողովներ կազմակերպելով ընկերվարութեան ծաւարման պիտի աշխատին :

Յօդուած 20.— Մասնաճիւղերը իրենց ընտրողական շրջանակին մէջ երեսփոխան և քաղաքապետական ընտրութեանց մէջ կուսակցութեան ընտրելիք մէկ թեկնածուին յաջողութեան պիտի ջանան :

Յօդուած 21. — Մասնաճիւղերու վարչութիւնը առ նուազն շաքաթը անդամ մը պէտք է նիստ գումարէ և տրուած որոշումները յատուկ տետրակին մէջ արձանագրէ: Այս որոշումները վարչութեան անդամներուն կողմէ կը ստորագրուին: Մասնաճիւղերը իրենց բոլոր գործերուն և գործունէութեան մասին կեդրոնական վարչութեան տեղեկագիր մը կը յանձնեն:

Յօդուած 22. — Մասնաճիւղերը կուսակցութեան անդամակցելու փափաքող և ընդհանուր հիմանց գըլուխին մէջ յայտնուած յատկութիւնները ունեցող ընկերները կ'ընդունին իբրև թեկնածու: Նախ և անոջ կուտայ անոր մէկ ամսոյ համար առժամեայ վաւերագիր մը և թեկնածուին 3—5 չափով երկու կենդանագիրները և մանրամասն նկարագիրը կեդրոն. վարչութեան կը յղէ: Կեդր. վարչութիւնը նոյն թեկնածուին կուսակցութեան մէջ մանելուն հաւանութիւնը տալէն յետոյ, բուն ինքնութեան վաւերագիրը զրկելու պարագային, առժամեայ վաւերագիրը ետ կ'առնուի և յիշեալ ընկերին երրորդ կենդանագիրը կը ներփակուի մասնաճիւղին անդամներուն յատուկ տետրակին մէջ:

Յօդուած 23. — Այն վարչութիւնները՝ որոնք իրենց պաշտօնը ըստ արժանւոյն չեն կրցած կատարել, կամ թէ այդ կը հաստատուի զրկւած քննիչներուն քննութիւններէն անմիջապէս կը փոխուին:

Յօդուած 24. — Այն մասնաճիւղերը, որոնք կեդ. վարչութեան քաղաքականութեան և ընդհանուր գործունէութեանց հակառակ կը վարուին, կեդրոնական վարչութեան որոշումով անմիջապէս կը փակուին և

դանուած չարժուէն և անչարժ կալուածները և սքնտուկին դրամը կեդր. վարչութեան կողմանէ կը գրաւուին:

Յօդուած 25. — Մասնաճիւղերը իրենց եկամուտին մէկ երրորդը իրենց պատկանեալ կեդրոնական խորհուրդէն, կեդրոնական խորհուրդն ալ կեդր. վարչութեան զրկել պարտաւոր է, մնացեալ գումարը իբրև պահեստի դրամ պէտք է մնայ:

Յօդուած 26. — Եթէ կեդրոններու և մասնաճիւղերու ընկերներէն մին ուրիշ մասնաճիւղ մը կամ կեդրոն մը փոխադրուիլ ուզէ, հաշիւը տեսնուելէ յետոյ, վարչութեան կողմանէ կնքուած վաւերագիր մը ստանալով, միւս մասնաճիւղը կամ կեդրոնը կը փոխադրուի:

Յօդուած 27. — Մասնաճիւղերը գործելու ազատութիւն ունին կուսակցութեան սկզբունքներուն յառաջդիմութեան և անոր զարգացման վերաբերեալ խնդիրներու մէջ:

Յօդուած 28. — Իւրաքանչիւր մասնաճիւղ հիւանդաց յանձնաժողովին կանոնադրութեան համեմատ, հիւանդութեան պատճառաւ աշխատելու անկարող անդամներուն պէտք նոյն դրամական օգնութիւնը ընելու պարտական է:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդուած 29. — Հինգ մասնաճիւղեր, կեդրոնական վարչութեան հրամանը և որոշումը ստանալով իրենցմէ մէկ մասնաճիւղը իբրև կեդրոնական խորհուրդ կ'ընդունին:

Յօդուած 30.— Կեդրոնական խորհուրդ կարգուած մասնաճիւղին գիւանը կը կազմուի Կեդր. վարչութեան կողմէ ընտրուած կամ անուանուած մէկ նախագահէ, մէկ քարտուղարէ և մէկ գանձապետէ և անոնցմէ ընտրուած չորս անդամներէն:

Յօդուած 31.— Կեդր. Խորհուրդները, ասոնցմէ զատ խնդիրներու մէջ, մասնաճիւղերու յար և նման իրաւասութիւններ և պարաւանութիւններ ունին:

Յօդուած 32.— Կեդրոնական խորհուրդներէ իրենցմէ կախում ունեցող մասնաճիւղերուն գործունէութիւնը կը կազմակերպեն և կը քննեն և այս մասին իրենց ստացած կամ խմբագրած տեղեկագիրները կեդրոնին կը զրկեն:

ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդուած 33.— Կեդրոնական վարչութիւնը ունի գիւան մը որ գործաւոր ըլլալու պայմանաւ հետեւեալ կերպով եօթը անդամներէ բաղկացած է. մէկ առեւնապետ, որ է ընդհ. նախագահ՝ մէկ քարտուղար, մէկ գանձապետ և չորս անդամ, այս զիւանը ունի հինգ տարուան շրջան կ'անուանուի և կը փոխուի հիմնադիր ընկեր Հիւսէյին Հիւմի և Նամրզի կողմէ, նոյնպէս Կեդրոնական վարչութեան մէջ կայ, սոյն գիւանին կողմէ կարգուած տասներկու հոգիէ բաղկացեալ գործօն մասնախումբ մը:

Յօդուած 34.— Ասոնցմէ զատ կայ նաև տասներկու հոգիէ բաղկացած զիտական մասնախումբ մը և հիւանդ գործաւորներու և անոնց ընտանիքին օգ-

նութեան մասնախումբ» անունով ուրիշ մասնախումբ մը որ բաղկացած է մէկ նախագահէ, մէկ քարտուղարէ, մէկ գանձապետէ և երկու անդամէ: Գիտական մասնախումբին պաշտօնն է զբաղիլ լրագիր և հանդէսներու հրատարակութեամբ, բանախօսութեանց կազմակերպութեամբ, վերջապէս ընդհանուր կերպով ժողովուրդին մէջ ընկերվարական գաղափարներուն տարածման համար ամէն տեսակ միջոցներու գործադրութեամբ: «Հիւանդ գործաւորներու և անոնց ընտանիքներու օգնութեան» մասնախումբին պաշտօնը բացատրուած է հիւանդաց յանձնաժողովի կանոնագրութեան մէջ: Վարչութիւնը կ'անուանէ և կը փոխէ զիտական և հիւանդաց մասնախումբերու անդամները:

Յօդուած 35.— Այս չորս մասնախումբերը ի մի հաւաքելով ընդհանուր ժողով մը կազմեն որ ունի խորհրդակցական ժողովի հանգամանք: Այս ընդհանուր ժողովը նիստի հրաւիրելը վարչութեան իրաւասութիւնն է:

Յօդուած 36.— Կեդրոնական վարչութեան գանձապետը կ'ընտրուի և կ'անուանուի վարչութեան անդամներէն և վարչութեան քուէներու միաձայնութեամբ:

Յօդուած 37.— Կեդրոնական վարչութեան պաշտօններն են, կուսակցութեան նոր անդամներ արձանագրել, ոմանք հեռացնել, կազմել և հատտատել մասնաճիւղեր և կեդրոնական խորհուրդներ, մասնաճիւղերուն եւ կեդրոնական խորհուրդներուն գործելակերպը, թելադրել և շարունակելի ընել, պատգամաւորական ժողովը (քօնկրէ) նիստի հրաւիրել, երես-

փոխանութեան թեկնածուները ցոյց տալ և ուրիշ ասոնց նման զբաղումներ. նոյնպէս ունի իրաւասութիւնը գործադուլի որոշում տալու, զայն կազմակերպելու և վարելու:

Յօդուած 38.— Կեդրոնական վարչութիւնը զ'ունենայ մէյմէկ պատգամաւոր մասնաճիւղերու կեդրոնական խորհուրդներու մօտ, աւժամեայ կամ մշտնջենաւոր: Մյս պատգամաւորները պաշտօն ունին ապահովելու բարւոք վարչութիւնը մասնաճիւղի և կամ կեդրոնական խորհուրդի գործերուն և կէտ առ կէտ գործադրութիւնը ներքին կանոնադրի տրամադրութեանց և հսկելու կեդրոնական վարչութեան հրամաններուն և հրահանգներուն արագ գործադրութեան և հպատակութեան և այլն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՂԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ (Գօնկրէ)

Յօդուած 39.— Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը կը գումարուի տարին անգամ մը մանաւանդ Սէպտեմբերի սկիզբը, միմիայն կեդրոնական վարչութեան հրաւերով և կը կազմուի բոլոր մասնաճիւղերու կեդրոն զրկած պատգամաւորներուն հաւաքումովը:

Յօդուած 40.— Պատգամաւոր մը կրնայ ներկայացնել միմիայն մէկ մասնաճիւղ: Այն մասնաճիւղերուն համար որոնք չեն կրնար պատգամաւոր զրկել, կեդրոնական վարչութիւնը կրնայ ընտրել փոխանորդ մը:

Յօդուած 41.— Մասնաճիւղերու պատգամաւոր-

ներուն անմիջական ծախքերը կը վճարուին մասնաճիւղի սնտուկէն: Պէտք է իրենց ձեռքը ունենան մէյ մէկ յանձնարարագիր և տեղոյն ընդհանուր գործերուն մասին կանոնաւոր տեղեկագիր մը և տետրակ մը ուր արձանագրուած ըլլայ ասրուան մը միջոցին կեդրոնական վարչութեան զրկուած ամէն առաքումները:

Յօդուած 42.— Պատգամաւորական Ժողովին կը նախագահէ կուսակցութեան նախագահը, ատենադպիրի պաշտօնը կը կատարէ ներկայ գտնուող անդամներուն և պատգամաւորներուն մէջէն մին, որ քուէարկութեան իրաւունքով ընտրուած է:

Ծ ր ա գ ի ր

Ընկերվարութիւնը, կը նշանակէ անհավասարութեան և անարդարութեան վրայ հիմնուած ներկայ ընկերութեան հիմնական կազմութեան մէջ փոփոխութիւններ մտցնել և զայն ասանելի դիճակի մը հասցնել:

Այս բանին հասնելու մամար ընդունուած հիմնական պահանջքները հետեւեալներն են:

1.— Գործաւարական և առևտրական միջնորդները հասարակական սկզբունքներու վրայ հիմնել:

2.— Նոյն նպատակը հետապնդող մարմիններու հետ միջազգային գործակցութեամբ աշխատակցիլ:

Ընկերվարական կուսակցութիւնը հիմնական պահանջներուն իրականացման ակնկալութեամբ ընդհանուր բարեփոխումներ կատարելու կը ձգտի:

ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

- 1.— Ամէն տեսակ ընտրութիւններ պիտի ըլլան անմիջական, ընդհանուր և համեմատական քուէարկութեան գրութեամբ:
- 2.— Ընտրութեանց չրջանը 2 տարիի զեղչուիլ և բարձրացում երեսփոխաններու թուոյն:
- 3.— Մամուլի ազատութիւն և հրատարակային ժողովներու ազատութիւն:
- 4.— Վէճի անարկայ եզոզ միջազգային խնդիրներու մէջ իրաւարարութեամբ հարթելու համար մէկը իրաւարար կարգել:
- 5.— Կրօնքը ընդունիլ իրրեւ անհատական խնդիր:
- 6.— Հանրային կրթութեան ամէն տարիճանները ձրի պիտի ըլլան:
- 7.— Մահուան պատիժի ջնջում, ձրի դատավարութիւն:

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն

- 8.— Զնջում մարդկային կենսական պէտքերուն ծառայող առարկաներուն վրայ առնուած տուրքերուն: Յառաջատուական տուրք մանաւանդ ժառանգութեան վրայ:
- 9.— Անհրաժեշտ պէտքերու արտադրութեան և պատրաստութեան աշխատող հողագործ, գործաւոր և ուրիշ աշխատաւորներէն ոչ մէկ տուրքի գանձում:
- 10.— Բարձրացում տուրքերու որ կը գանձուին շուսյութեան և գրօսանքի նիւթերէն ինչպէս նաև



զիջուած և առանց օգտակարութեան մնացած ստացուածքներէն:

11.— Ազգայնացում կամ պետականացումով ղեկավարուժը երկաթուղիներու, հանքերու, գրամատուններու, ընկերութիւններու և ասոնց նման աքնտեսական հաստատութիւններու, ինչպէս նաև արգիւնաբերական և գործարանական միջնորդներու:

ԴՐԱՄԱԶՈՒՐԿ ԴԱՍԱԿԱՐԳԻՆ ՊԱՇՅՊԱՆՈՒԹԻՒՆԸ


12.— Դրամատէր դասակարգին բռնակալութեան տակ ճնշուած փոքր վաճառական, հողագործ, գործաւոր և այլն աղքատ և աշխատաւոր դասակարգին պաշտպանութիւնը ապահովել և այս մասին պէտք եղած հաստատութիւնները կազմելու նպատակով ձեռնարկներ սասանձել:

13.— Արուեստներու, վաճառականութեան և երկրագործութեան մէջ աշխատաւորութիւնը օրէնքին պաշտպանութեան տակ առնել:

14.— Շարաթը մէկ անգամ հանգիստ, այսինքն գործատէրները եօթը օրուան մէջ վեց օրէն աւելի աշխատութեան չպիտի կրնան պարտադրել:

15.— Աշխատութեան տեղութիւնը օրական 8 ժամի իջեցնել:

16.— 14 տարեկանէն վար եղող մանչ և 16 տարեկանէն պզտիկ աղջիկ տղաքները աշխատցնելէ արգիլել: Զափահանները կէս օր տեղութեամբ և իրենց դաստիարակութեան և դորդացման համեմատող զբաղումով աշխատցնել:



17.— Կիներու և տղաքներու դիշերային աշխատութիւնը արգիլել: Նոյնպէս արգիլել դիշերային աշխատութիւնը բոլոր այն արհեստներու մէջ որոնց համար անհրաժեշտ պէտք չի տեսնուիր գիշերն ալ աշխատիլ:

18.— Արուեստի, վաճառականութեան և երկրագործութեան մէջ աշխատող գործաւորներու և անոնց միջակորեակ դասակարգի արհեստաւորներուն (էս-նաֆ) ու թաղապետութեան ընկերակցութեամբ միութիւն կազմելով իրենց օրական նուազագոյն չափով դիշերու հաստատումը:

19.— Գործատէրերը թէ ատկանքի և թէ տարբեր եղանակով գործաւորին օրականէն զիջելու իրաւունք պիտի չունենան. գործարաններու և ճարտարարուեստական հաստատութեանց յատուկ կանոնադրութեան խմբագրութեան մէջ գործաւորներու մասնակցութիւնը:

20.— Ապահովել գործատեղիներու, գործարաններու, արհեստանոցներու և հանքերու և նման վայրերուն առողջապահական պայմաններու հակառակ չըլլալու եղանակով պահպանումը և սյգ վայրերը պետութեան և գործաւորական սենտիքաներու կողմէ ընտրուած քննիչներուն հսկողութեան տակ պահել:

21.— Վաճառականութեան, երկրագործութեան և արուեստի ամէն ճիւղին մէջ բոլոր օրավարձով աշխատողներուն համար «Բրտոմի» կոչուած գործատէրերէ և գործաւորներէ ընտրուած և կազմուած հասարակ դատարաններուն հաստատումը և գործաւորա-

կան նախախորութեան մը կազմութիւնը և ասոր ալ անկարելիութեան պարագային, «Գործաւորներու զբաղմանց զիւան» անուամբ հանրօգուտ շինութեանց նախադրութիւնէն կարգեալ զիւանի մը հաստատումը:

22.— Բանտարկեալներու աշխատութեանց մեծահոգի գրութեան վերածումը:

23.— Բանտարկեալներու աշխատութեան վարձքը պէտք է ըլլայ սէնտիքայի մասնակից գործաւորներուն վճարուած վարձքին հաւասար:

24.— Գործաւորներու գործադուլի ազատութիւնը արդար կը համարուի:

25.— Բնական և անտեսական վտանգներու դէմ ապահովագրական հաւաքական ընկերութիւններ հաստատել:

26.— Գործադուլի, ծերութեան, անկարողութեան, արկածի կամ հիւանդութեան ժամանակ, կեանքի մէջ անխուսափելիօրէն պատահած այս փորձանքներուն դէմ կազմել և հաստատել հասարակական ընկերութիւն մը որ վաճառականութեան, երկրագործութեան և արուեստի աշխատաւորներուն ընդհանուրին համար գործադրելի իրերաօգնութեան նպատակ տեսնայ:

27.— Գործաւորներու օրականներէն ոչ մէկ դրամ չգանձուելու պատճառով 2/3ը դրամատէրներու և անոնց միջնորդները եղող գործատէրերու կողմանէ և 1/3ն ալ պետութեան կողմանէ վճարուելու պայմանով հանգստեան մատուկներու հասարակական ընկերութիւն մը հիմնել:

29.— Հասարակական ընկերութեան վարչական գործերուն մէջ աշխատաւորութեան մասնակցութիւնը և գօնթրօլի իրաւունքը:

Կանոնագիր

ԹՈՒՐԲԻՈՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՕՆ ՄԱՐՄՆՈՑ



Յօդ. 1.— Ամէն մասնաճիւղի և կեդրոնական խորհուրդի մէջ կաղմուած է մէյ մէկ գործօն մարմին որուն պաշտօնն է ներկայ կանոնագրին տրամադրութեանց ամբողջական գործադրութիւնը :

Յօդ. 2.— Այն մարմինները կազմուած են մասնաճիւղերու մէջ հինգ և կեդրոնական խորհուրդներու մէջ եօթը հոգիէ որոնց մէջ մէկ նախագահ և մէկ քարտուղար կ'ըլլայ :

Յօդ. 3.— Գործօն մարմինն նախագահը, քարտուղարը և անդամները մասնաճիւղին կամ կեդրոնական խորհուրդին վարչութեան կողմէ կ'անուանուին, բայց չեն կրնար իրենց գործունէութիւնը սկսիլ առանց կեդրոնական վարչութեան կողմէ իրենց պաշտօնը հաստատուելու :

Յօդ. 4.— Այն գործօն մարմինները որոնք իրենց պաշտօնը ըստ արժանւոյն չեն կատարեր, անմիջապէս

կը փոխուին պատկանեալ վարչական խորհուրդին որոշումով և կեդրոնական վարչութեան հաւանութեամբ և վաւերացումով :

Յօդ. 5. — Եւրկայ կանոնադրին տրամադրութիւնները չը յարգող և իրենց պաշտօնը չը կատարելը կեդրոնական վարչութեան զրկած քննիչներուն կողմէ կթէ նշմարութիւն գործօն մարմինը և պատկանեալ մասնաձիւղի վարչական անդամները անմիջապէս կը փոխուին և անոնց մասին պէտք եղած օրինական գործողութիւնը կը կատարուի :

Յօդ. 6. — Գործօն մարմինները առնուազն շաբաթը մէկ անգամ նիստ կը գումարեն և վարչութեանց իրենց յանձնած գործերը կը քննեն և իրենց պաշտօնին վերաբերեալ խնդիրներու մասին կը խորհրդակցին :

Յօդ. 7. — Այս մարմինները ամէն ամիս կը խըմբագրեն երկու օրինակ տեղեկագիր մը, որուն մէկ օրինակը կեդրոնական վարչութեան ձեռքը հասնելու պայմանաւ երկու քն ալ պատկանեալ մասնաձիւղին կը զրկեն :

Յօդ. 8. — Գործօն մարմիններուն տուած որոշումները նախապէս վարչութեանց հաւանութիւնը և վաւերացումը ստանալէ յետոյ գործադրութեան կը դրուին :

ԳՈՐԾՕՆ ՄԱՐՄԻՆԻՆ ՊԱՇՏՏՈՆՆԵՐԸ

Յօդ. 9. — Մասնաձիւղի անդամներէն անոնք որ կարգալ գրել զիտեն ու դաստիարակութիւն ունին կը ընտրուին մասնաւանդ իբրեւ անդամ գործօն մարմիններուն :

Յօդ. 10. — Գործօն մարմիններու անդամները իբրեւ անդամները յետագայ պաշտօնները կատարելու պարտականութիւն ունին :

Ա. — Յարգել ծրագրին և ներքին կանոնադրին տրամադրութիւնները և չինայել ոչ մէկ ջանք ամբողջ ընկերներուն կողմանէ անոնց գործադրութեան :

Բ. — Բրօքականա ընել ամէն տեղ ի նպատակ մեր սկզբունքին և դիւրացնել ընկերներուն աւելնալը և ընկերվարութեան արագ տարածումը :

Գ. — Ծայրաստիճան զգուշութիւն որպէս զի մեր կուսակցութեան մէջ մանող ընկերները ըլլան: ամեն տեսակ արատէ և թերութեանէ զերծ և բարի վարքի տէր:

Դ. — Մեր կուսակցութեան ընկերներուն միջեւ ծագելիք ամէն տեսակ թիւրիմացութիւններն ու չար խորհուրդներն արգիլելու ջանալ և խնդրոյն հաղորդակից ընել պատկանեալ մասնաձիւղին վարչութիւնը :

Ե. — Պէտք եղած բարի թելադրութիւններն ընել մեր սկզբանց և քաղաքականութեան դէմ խօսող անձերուն :

Զ. — Հսկել գործադրութեան այն միջոցներուն որոնցմով պիտի ապահովուի կանոնաւոր վճարումը ընկերներուն ամսարածինին :

Է. — Պէտք եղած ժամանակ հիւանդաց յանձնաժողովին անդամներուն օգնել և մասնաձիւղին անդամակից եղողներուն ոչ մէկուն զրկումին առիթ տալ :

Ը. — Ընկերներուն անիրաւութիւն նշաւակ ըլլալու

պարագային, քննութիւն կատարել և մասնաձիւղին վարչութեան տեղեկագրել:

Բ.—Վարչութիւններէն իրենց յանձնուած գործերը շուտափոյթ հետազոտել և առ առաւելն մէկ շաբաթէն պատասխան տալ:

Ժ.—Ձանալ ընդհանուրին ծանօթացնել մեր սկզբունքներն և նպատակները, և ասոր համար յանձնարարել բոլոր ընկերներուն այն օրաթերթին ու պարբերականները, որոնք կը տարածեն Ընկերվարական գաղափարները:

Յօդուած 11.—Գործօն մարմիններու անդամաց ի պահանջել հարկին նախատեսած ծախքերը պէտք է ենդարկուին:

Յօդուած 12.—Ներկայ կանոնագրութեան մէջ յաւելուած և կամ սրբագրութիւն մը քնել եթէ պէտք չլլայ, պէտք է այդ մասին կեդրոնական վարչութեան որոշումը:

Կանոնագրութիւն

ԹՈՒՐԲԻՈՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԻԱՆԴԱՑ ՍՆՏՈՒԿԻՆ



Յօդուած 1.—Ամեն մասնաձիւղներու և կեդրոնական խորհուրդներու մէջ, Թուրքիոյ Ընկերվարական կուսակցութեան անգամակցող ընկերներուն իրենց կամ ընտանիքին հիւանդութեան միջոցին օգնութեան հասնելու համար կազմուած է մէյմէկ «Հիւանդութեան Սնտուկ»:

Յօդուած 2.—Այս սնտուկները մասնաձիւղերու մէջ մէկ նախագահ, մէկ քարտուղար, մէկ գանձապետ և 2 անդամէ բաղկացեալ 5 հոգինոց յանձնախումբ մը կը վարէ. իսկ կեդրոնական խորհուրդներու մէջ ալ 7 հոգիէ բաղկացեալ յանձնախումբ մը կը վարէ:

Յօդուած 3.—Յանձնախումբին անդամները կորոշուին մասնաձիւղին կամ կեդրոնական խորհուրդին վարչութենէն, սակայն անոնց պաշտօնները կեդրոնական վարչութենէն վաւերացուելու չեն կրնար գործել:

Յօդուած 4.— Սոյն կանոնին համեմատ չկազմուած և այս կանոնագրութեան տրամադրութիւնները չը յարգող յանձնախումբը և անոր վարչութեան անդամները կը փոխուին և անոնց գեմ օրինական հետապնդում կը կատարուի:

Յօդուած 5.— Այս յանձնախումբերը աւելուադն չաբաթը մէկ անգամ կը գումարուին և իրենց տեղի ունեցած դիմումները շուտ ընդ փոյթ քննելու համար անմիջապէս արատովոր նիստ կրնան գումարել:

Յօդուած 6.— Յանձնախումբերը ամեն ամիս կանոնաւորաբար կը խմբագրէ տեղեկագիր մը սնտուկին ելմտական վիճակին և մատուցած ծառայութիւններուն մասին երկու օրինակ, որոնցմէ մին կեդրոնական վարչութեան ղրկուելու պայմանաւ երկուքը միասին մասնաճիւղին կը ղրկուի:

Յօդուած 7.— Յանձնախումբերուն տուած որոշումները, վարչութեան հաւանութեամբ գործադրութեան կը գրուի:

Յօդուած 8.— Իրենց պաշտօնները ըստ արժանւոյն չկատարող յանձնախումբերը անմիջապէս պատկանեալ մասնաճիւղերու վարչական խորհուրդներուն որոշումով և կեդրոնական վարչութեան հաւանութեամբ կը փոխուին:

Յօդուած 9.— Յանձնախումբին կողմէ տեղի ունեցած ամբողջ ծախքերը, ստորագրութեան փոխարէն կը կատարուին: Յանձնախումբէն օգնութիւն ստացողները, ի փոխարէն, պարտին ստացագիր մը տալ:

Յօդուած 10.— Կուսակցութեան պատկանող մաս-

նաճիւղի հիւանդաց սնտուկին ամսական 20 դրշ. վճարել պարտական են:

Յօդուած 11.— Յանձնախումբին սնտուկին մէջ միայն 50 ոսկիի չափ գումար մը կրնայ մնալ: Աւելին կեդրոնին և նախագահին և յիշեալ հիւանդաց յանձնախումբին նախագահ, քարտուղար և գանձապետին ստորագրութիւններով իսկ գաւառները պատգամաւորներու և նոյնպէս յիշեալ յանձնախումբերուն նախագահին, քարտուղարին և գանձապետին ստորագրութեամբ և հիւանդաց յանձնախումբին պաշտօնական կնիքով գրամատուն կը յանձնուին:

Յօդուած 12.— Երեք ամիս այս սնտուկին ամսավճարը չվճարող ընկերները յանձնախումբէն ոչ մէկ կեդրուով օգնութիւն պահանջելու իրաւունք ունին:

ՕԳՆՈՒԹԻՒՆ ԸՆԵԼՈՒ ՊԱՐԱԳԱՆԵՐ

Յօդ. 13.— Յանձնախումբը, զաղղիական օրտ և ջերմամիզութեան նման վեներական հիւանդութիւններ քացառութիւն ըլլալով ուրիշ ամեն հիւանդութիւններու և ծննդաբերութեան և անոր հետեւանք եղող հիւանդութիւններուն ենթակայ եղող ընկերներուն, ընտանիքներուն ինչպէս նաև մեռնողներուն ընտանիքներուն օգնութիւն պիտի ընէ:

ՕԳՆՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Յօդ. 14.— Յանձնախումբէն օգնութիւն պահանջելու համար պէտք է հիւանդութիւնը իմացնել:

Օգնութիւնը վերջին ազդարարութենէն կը սկսի և անցած օրերուն համար ոչինչ կրնայ պահանջուիլ:

Յօդ. 15. — Յրդ յօդուածին մէջ յիշատակուած հիւանդութեանց համար յանձնախումբին գիմող ընկերին տունը անմիջապէս բժիշկ մը կը դրկուի, որ հիւանդը կը քննէ, գործանին համար պէտք եղած դեղերը ձրի կը տրուին և օրական կաթազին անուամբ 30 դրուչ կը վճարուի:

Յօդ. 16. — Կուսակցութեան զրկած բժիշկին տեղեկագրին համեմատ եթէ օգնութիւնը աւելցնել պէտք ըլլայ, այս խնդիրը սնտուկի դրամը նկատողութեան առնելէ յետոյ, յանձնախումբի կողմանէ մասնաճիւղին և մասնաճիւղին կողմանէ ալ կեդրոնական վարչութեան հաւանութեամբ օգնութիւնը կ'աւելցուի:

Յօդ. 17. — Այս կանոնադրութեան յաւելուած աւելցնելը և կամ սրբազրութիւն մը կատարելը կեդրոնական վարչութեան որոշումով կը կատարուի:







2013

« Ազգային գրադարան



NL0040294

7/12

